

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ" ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ *ՈՐԱԿԻ ԵՎ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ*

ԴԱՆԻԴԱ Դրամաշնորհ ԴԱ/ -817-AM

Սույն "Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր"-ը հետևում է սույն ծրագրի համար Ընդհանուր գնումների ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business UN331 թիվ 802, 24 Հունիսի, 2011թ-ին:

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ դրամաշնորհ է ստացել Դանիայի թագավորության Միջազգային զարգացման գործակալությունից /այսուհետ՝ ԴԱՆԻԴԱ/ աջակցելու "Գյուղական Կարողությունների ստեղծում" ծրագրի /այսուհետ՝ ԳԿՄԾ/ թիրախային ազգաբնակչությանը և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

Ծրագրի նպատակն է՝ խթանելու երկարաժամկետ, կայուն և մասնավոր հատվածի կողմից կառավարվող տնտեսական աճը, աջակցություն տրամադրելով Հայաստանի լեռնային անբարենպաստ գյուղական համայնքներում մրգի և ընկուզեղենի արտադրությանը:

Ծառայությունները՝ Ծրագրի նպատակներին և խնդիրներին համապատասխան ֆինանսական կայուն պրոդուկտ ստեղծելու նպատակով Խորհրդատուն պետք է՝

- Իրականացնի շուկայի ուսումնասիրություն և ֆինանսավորման համար առավել նպատակահարմար մշակաբույսերի ընտրություն /մոտավորապես յոթ հատ/, որպեսզի դրանց արտադրության համար տրամադրվի ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն,
- Ընտրված մշակաբույսերի համար իրականացնի տնտեսական մոդելավորում և տեխնիկա-տնտեսական հիմնավորում,
- Ընտրված մշակաբույսերի արտադրության զարգացմանն ուղղված համապատասխան վարկային պրոդուկտների և դրանց տրամադրման պայմանների մշակում:

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր:

Հետաքրքրության հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Առնվազն 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների /շուկայի հետազոտության, տեխնիկատնտեսական հիմնավորումների, տնտեսական մոդելների, վարկային պրոդուկտների մշակման և այլն/ մատուցման վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ ծրագրի և պատվիրատուների անվանումները, պայմանագրային արժեքները, իրականացման տարեթվերը, բավարար ապացույցներ իրականացված խորհրդատվական աշխատանքների, մշակումների և ծրագրերի պրակտիկայում ներդրման և վավերացումների, ինչպես նաև կյանքի կոչված խորհրդատվական ծառայությունների արդյունքների մասին և այլն;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի հայտատուն:

Հետաքրքրության հայտը ներկայացվում է անզլերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010 սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2014թ. հոկտեմբերի 02-ը, ժ. 18.00:

*ՀՀ ԿԱ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ
Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան*

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ:

Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 – 10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 – 58; e-mail: procurement@rado.am